ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ ԷՐ «ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍ» ԾՐԱԳՐԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻՆ

26.12.2019 21:08

ՀՀ փաստաբանների պալատը 2019թ. դեկտեմբերի 26-ին հյուրընկալել է «Գործարար կառավարման մագիստրոս» (Executive Master of Business Administration) կրթական ծրագրի ղեկավարների համար նախատեսված հայալեզու մագիստրոսական ծրագրի ներկայացուցիչներին:

Այցի հիմնական նպատակն էր ծանոթանալ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, ՀՀ փաստաբանական դպրոցի և Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքներին և դրանց կառավարման մոդելներին:

Մագիստրոսական ծրագրի խմբի ղեկավարն էր Տնտեսական համագործակցության եվրոպական լիգայի խորհրդի (Բրյուսել) անդամ, Մերձավոր Արեւելքի Որակի Ասոցիացիայի (Դուբայ, ԱՄԷ) հիմնադիր անդամ, Լիբանանի Saint Joseph, Քուվեյթի Պարսից Ծոցի Գիտության և Տեխնոլոգիայի, Ֆրանսիայի Փարիզ 9-Դոֆին համալսարանների, Հայաստանի Ամերիկյան Համալսարանի դասախոս Ռաֆֆի Սեմերջյանը:

Ծրագրի մասնակիցները Փաստաբանների պալատի գործընկերների հետ քննարկել են բժիշկների էթիկայի կանոնների, բժշկական պալատի ստեղծման կարևորությանը ինչպես նաև բժշկական ապահովագրությանը վերաբերող հարցեր: Փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը ներկայացրել է փաստաբանական գործունեության առանձնահատկությունները, համեմատություններ է անցկացրել փաստաբանի և բժիշկի կատարած աշխատանքի և պատասխանատվության բարձր մակարդակի վերաբերյալ:

Մագիստրոսական ծրագրի մասնակիցները շրջայց են կատարել Փաստաբանների պալատի շենքում՝ այցելելով Փաստաբանական դպրոց և Հանրային պաշտպանի գրասենյակ:

Ծրագրի դասախոսական անձնակազմը միջազգային հայտնի համալսարանների շրջանավարտներ են, ինչպիսին են օրինակ՝ Bristol, Binghamton, Concordia, Harvard, Imperial College of London, Paris I Pantheon–La Sorbonne և այլն: Դասախոսական անձնակազմը լավագույն փորձի փոխանակում է իրականացնում մասնակիցների հետ, իսկ դասավանդվող առարկաները կառավարման անհրաժեշտ և թիրախային ուղղություններն են, որոնք նպաստում

են ծրագրի մասնակիցների հմտությունների զարգացմանը։

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })